

դասը, բոլոր մեծերէ ու Ճոխերէ սաղկացած ըլ-
լալով, իննըսունըութ հարիւրեակ կը կազմէ, մինչդեռ միւս հինգ դասերը՝ որ ազգին միւս մասը
կը կազմեն, բոլորը մէկաեղ իննըսունըհինգ հա-
րիւրեակ կը համնին: Ուստի հետևաբար այն ժո-
ղովներուն մէջ ուր ըստ հարիւրեկաց կը վճռեն՝ ա-
սաելութիւնը առաջն դասուն կ'ըլլայ: Բայց թա-
գաւորը որպէս զի ստորին դասերուն այս կողմա-
նէս կրած լինասին տեղը փոխարինէ, վճռեց որ
զօրաժողովն ու հարկաց տուրքը հարիւրեկաց թո-
ւոյն համեմատ ըլլուի: Ասանկով առաջն դասը
շատ աւելի կը վճարէ ու զօրք կու տայ, քան ինչ
որ կու տայ բոլոր ազգին մնացորդը • և նաև յետին
դասը ամենաին բան մը չար, որով իր ոջնու-
թիւնը արդարացի փոխարին մը կ'ըլլայ: Ժողո-
վարդը այս խարէական առաւելութիւններէ խա-
րութիւնը իր իրաւունքներէն՝ որ իրեն դժուարին
կ'երկային և աղէկ ալ չէր վայելէր՝ առանց ցաւի
հրաժարեցաւ. առանց ընդդիմութեան թողուց որ
մեծերը լինանութիւնը ձեռք առնուն, բաւական
համարելով որ աէրութեան մեծագոյն բեռոք միայն
աննք կրեն. և իր իշխանութենէն հրաժարելով ա-
ւելի ընտիր համարեցաւ հանգիսաը քան զպատիւը:
Հոսոմէական ժողովրդեան վիճակը հաստատուն
կ'երկար. իր նշանաւոր պատգամ մոռցած, խայտա-
լութեամբ ըրած զոհին պատուը կը վայելէր, երբ
այս կարգադրութենէս վաթսունընօմը տարի
ետքը քատմնելի գործողութեան մը պատճառաւ
Տարկունեանք Հոռոմայէն քշուեցան: Հասարակա-
պետական կառավարութիւնը հաստատեցին ու
թագաւորական իշխանութեանը դէմ այնպիսի ա-
տելութիւն մը կապեցին՝ որ ոչ երեք ստեցաւ:
Ժողովուրդն որ մինչեւ ան ատեն առանց տրանժե-
լու թագաւորաց կը հնազանդէր՝ մեծամեծաց դը-
րած լծին դէմ սուք ելաւ: Բայց իրեն ըրած ձիգն
առջ բերան աղէկ ընդունելութիւն չգտնելով ար-
համարհուեցաւ. այլ յետոյ ազգութայլափոխի մը
պատճառաւ՝ բռնագատառւեցան մեծերը անոր զի-
ջանիլ. և անով ժողովուրդը Տրիբուններ ունեցաւ:
Սակայն իր պահանջնմունքները երթարով շատցան.
որոնք թէպէտ հակառակ կողմէն քաջութեամբ
մէրժուեցան, այլ միշտ ժողովուրդը կարճաբար
նյին պահանջնանց վրայ հաստատուն կեցաւ: Ըստ
հարիւրեակ ակմբից մէջ ամէն առաւելութիւն մե-
ծերուն կ'ըլլար. ժողովուրդը մինչդեռ այս ակմբից
մէջ անոնց ազգեցութիւնը նուազեցնել կ'ուզէր,
կը վախնար միւս կողմանէ այնպիսի կարգ մը փո-
խել ուսկից իրեն հիմնական օգուտներ կու գար:
Վէրջապէտ երկային ու սաստիկ վիճաբանութիւն-
ներէ ետքը, որոնց մէջ երկու կողմանց ալ Ճարտա-
րութիւնը հաւասարացէն երկան ելաւ, ուրիշ
երրորդ տեսակ ակումբներ հաստատեցին, որոնք
երօք հարիւրեակ ակմբից իշխանական կարուղու-
թիւնը չունեցան, բայց տէրութեան երկրորդա-
կան կարգի պաշտօնները ասոնք կը բաժնեն
քաղաքացի որ ցեղերուն ցուցակը մէջ մը
գրուած է, հոսոմէական տէրութեան որ կողմն
ալ բնակելու ըլլայ այս ժողովքներուն մէջ իր
քուէն առաջ իշխանութիւն ունի:

ա. Այսպէս ըստ Գրոհի¹ ակումբներուն մէջ
քաղաքին ժողովուրդը կը յարթանակէ: Ասոնց

մէջն է որ մէջ հարիւրացակը¹ կ'ընտրուի, որ որդե-
գուութիւնը կ'ըլլուին, վասն զի հոսմէական քաղա-
քացի մը չկրնար վիճակը փոխել առանց ազգային
ժողովքին հաւանութեանը: Նոյնպէս այս ժողո-
վոց մէջն է որ զօրավարաց ընտրութիւնը կը հաս-
տատուի: Մինչև որ այս հաւանութիւնը չըլլայ,
ոչ բանակի հրամանատարութեան իշխանութիւն
ունին և ոչ ալ զինուորական գործողութեան մը
ձեռք զարնելու: Այսօրուան օրս այդ հաստա-
տութիւնը իբր պարզ արարողութիւն մը սե-
պուած է: որովհետեւ բաւական կը սեպուի այն
երեսուն նուիրակաց քուէարկութիւնը որ այս ա-
կումբները կը հաւաքեն, և իբր անոնց ներկայա-
ցուցիչ կը համարուին: Ըստ գրոհից ակումբնե-
րուն մէջ միշտ նախագահական կը նստին դիկտատորը.
հիւպատոսները, արէտորները կամ փոխարքան.
ժողովուելու տեղը փորոնին մէջ մասնաւոր տեղ
մ' է, զոր հաւահմայք նուիրած ու մասնաւոր ա-
սոր համար որոշած էն:

Եւ Ըստ հարիւրեակ ակմբից մէջ, մեծերը ու
հարուստները ժողովրդեան վրայ կը յաղթանա-
կէն: Իրենք են որ մեծ տաենակալներն ու բանա-
կին սպարապետները կ'ընտրեն. բուն օրէնքները
կը հաստատեն. թշնամի ազգաց գէմ պատերազմ
կը հաստարակեն. վերջապէտ իրենք են որ տէրու-
թեան յանցաւորները կը դատեն և ՚ի մահ կը դա-
տապարտեն ըստ յանցանաց, սակայն միշտ կարո-
ղութիւն տալով անոնց իրենց անձնական գա-
տաստանէն առաջ կամաւոր աքսորանք մը յանձն
առնելու:

Այս ժողովքներուն, որ շատ անգամ մէջ ա-
խամբէ կ'ըստին, կարևորութեանը համեմատ՝ նա-
խագահ կը նստին մեծ ատենակալները. ժողովքի
հրաւիրման հրովարտակը՝ ժողովքէն տասնըութ օր
առաջ կը հրաարարակուի, որպէս զի ամէն քա-
ղաքացիք որ իրենց գործողութեանց պատճառաւ,
վաճառանոցի համար որոշեալ իրեք օրերուն քա-
ղաքն որ կ'իջնեն, իմանան թէ ինչ նիւթի վրայ
պիտի մտածեն: Այս տեսակ ակումբները Արի-
սի գատը կը հաւաքուին: Որովհետեւ հարիւ-
րեակները պատերազմական կարգով կը չուեն ի-
րենց գլխաւորին առաջնորդութեամբը, միայն այս
զինուորական երկութը բաւական պատճառ կը
սեպուի զանոնք քաղեցն գուրս հաւաքելու. ինչու
որ քաղեցին օրէնքները բանակի երկութը ունեցող
ինչ և իցէ ժողով անկէ հեռու բռնելու կը հրա-
մայեն:

կը շարունակուի:

Քաղուանոյ բանք 'ի Վաստակոց գրոց :

ՄԵ. — Ա պահ պահէլոց վահաղող և այլ
ասդ մէր որ շատերի մինչեւ ՚ի գարուանն: —
Տէս 'ի յայդին շուք և շատ բերով 'ի
1 Պ. Comices par curies.

անկերոյ մէջ տեղի . և փորէ հոր արձակ գիրկ մի կամ երկու , և աւազ արկ 'ի ներքս . զբարունակն նոյն բերովս և խցկերովն՝ կախէ 'ի հորն , և զբերանն տախտէ , և հողով և շաքլով² ծածկէ . նա անարատ մնայ մինչ 'ի գարունն :

ՄԻԱՅ . — Դարձեալ այլ էերդ որ 'ի բառն կախս պահէլ : — Ը ինէ մեծ աղկը րեր . և առ ձիւթ և կվենի կամ մարխի փայտի սղոցուք , և խառնէ զսզոցուքն 'ի ձիւթն , և կորեկի յերդ³ . և այնով ծեփէ զաղկրերն 'ի ներքուստ և 'ի դրուստ որ բնաւ օդ չմննէ 'ի ներքս , և յատակն ցամաք սղոցուք լից , և զսերկւիլն , և զտանձն , և զինծորն 'ի սղոցուքն թաղէ , և թառեր դիր , և զխաղողն ընտրով զառողջ կուզելն 'ի թառերն կախէ , և 'ի վերայ փակէ , և զփակքն ձիւթէ և թող . և քանի բանաս և առնուս՝ շուտ փակէ և ծեփէ որ օդ չմննէ , զի իւր ապականին օդն է : Եւ են այլք որ զխաղողն 'ի դինեկալարաս 'ի կախ առնեն որ միուրն դեռ յատակն կենայ նա խիստ պահէ . և եթէ մրուրն չկենայ նա աւազ լից 'նա աղէկ է : Եւ այլ ումանք զծովու ջուրն եռյնեն և կուզերն ի ներքս միտեն և ապա հանեն և կախեն . այս ևս աղէկ է : Եւ այլք զկուզերն 'ի ջրած գինին թանան և հանեն 'ի գարեցեղն⁴ և յերդն թաղեն շատ մնայ : Եւ այլք առնուն թզենի փայտի մոխիրն , կամ զհօտին՝ և մոխրաջուր առնեն , և անդ թանան և կախեն շատ մնայ : Եւ այլքն ընտրեն զկուզերն 'ի շվէն⁵ և յազոխէն , և յամենայն նեխէ , և զկոյզկապերն ձիւթէ , և զկոյզն կախէ 'աղէկ է : Եւ այլք առնուն կառ և լիճ առնեն , և զկուզերն 'ի ներքս թաթիսն և պահէն և յորժամ ուզեն լուանան և ուտեն : Եւ այլք առնուն զանմեռկի ջուրն , և անդ թանան և պահէն : Եւ այլք զանձրեջուրն առնուն և եփեն որ կէսն մնայ . և զխաղողն :

1. Խամերէ . խաչաձե շիւք որք ունին զխաղողն :

2. Հաւուլ . Ճիւզերով :

3. Ցերտ . յարդ :

4. Գարեցեն . գարի գնելոյ ցեղուն :

5. Ի պէն . ոմկ . շիվ :

զողն 'ի ներքս եռյնեն աղէկ և պահէն , շատ մնայ . և ուտելն օգտակար է մարդոյ , ևս առաւել գլխոյ :

ՄԻՅ . — Յաղագ « խնծորի պահէլը խրառ : — Օ խնծորն քաղէ ձեռօքդ և 'ի տունն որ մնւխ չհասնի՝ գարէ յերդ լից և զինքն 'ի վերայ աւուզիլ արէ¹ որ ամբողջ մնայ . քանի տունին հով լինի լաւն այն է , և թէ առնու ոք ընկուզի սղոցուք , կամ կվենոյ , կամ գեր մախրի , և լուռ 'ի կարաս անձիւթ , և խնծորն 'ի ներքս թաղէ՝ ամբողջ մնայ . ապա զբերանքն ամսուր ծեփէ որ օդ չմտնէ . և թէ որպէս յառաջ գրեցաք աղկը առնես և գարէ յերդ կամ զսզոցուքն լուս և անդ գնես աղէկ է . ապա այս է լաւ քան զամէնն : Այս խնծոր ամբողջ 'ի ծառէն , և 'ի վերայ փայտին խամապատէ , և առ ընկուզիցախս և 'ի վերայ խնծորին փաթթէ որ ծածկէ ցախն աղէկ զինծորն , և այնով կախէ յսնմուխ և 'ի հով տունն ամբողջ պահէ :

ՄԻՅ . — Ոյլս նէ կամենաս զսերինելն և զինծորն ամբողջ պահէլ : — Այս սերկեիլ կամ խնծոր , զանարատն և լաւն , և վարոցնի և կամ թզենոյ չոր տերեւոյ , աղէկ չուանով վրան փաթթէ որ զտերեն 'ի վրան բռնէ , և ապա առ բրտի կառ և մազ դիր 'ի ներքս՝ և աղէկ կոխս որ միաւորին՝ և այնով 'ի վերայ տերեւին ծեփէ , և չորցուր 'ի շուքն արեւու և կախէ . կամ 'ի վերայ տախտակի դիր՝ և պահէ 'ի հով և 'ի անմուխ տուն . երբ զծեփին բանաս՝ թաժամ² գտնուս : Եւ տանձի վերայ զըրեալ գեղերս օգտակար է զերդ խընծորի . և թէ կամիս որ կանաչ մնայ , երբ կտրես ձիւթէ զկութերն , և ապա որպէս վերայ գրեալ ենք կախէ , շատ զիմանայ . բայց զմիրգն այլահամ ուտես :

ՄԻՅ . — Խրառ վասն նուան պահէլը : — Ոյէ ուզես որ 'ի ծառն պահէն պուտէնի³ առ և 'ի ծառն կախէ , և զինուան Ճզերով 'ի ներքս դիր և զբերանն բռով :

1. Տեղին արէ . շարել .

2. Թաժամ . թարմ :

3. Պատին . խեցեղէն աման :

ծեփէ, մնայ զողջ տարին . և թէ ոք պըր-
տուով՝ ի քթոցի օրէն խլժ շինէ¹
նոան, զերդ կենայ՝ ի ծառն և բուով
ծեփէ՝ մնայ աղէկ, և ոմանք երկայն
հոր փորեն և զնուուն և զայլ միգերն
թառերով կախեն և՝ ի վրայ ծածկեն,
որ ոչ զիջութիւն մանէ՝ և ոչ օդն:
լոյլ և թանձր աղջուր արա և զնուուն
՚ի ներս միսէ, և յարեն դիր որ ցամքի
աղէկ, որ խիստ սմքեցնէ զտերեն՝ երբ
կամենաս ուտել եղկ ջուր արա, և՝ ՚ի
ներքս պահ մի ՚ի թրջոց դիր, նա դա-
լարանայ և զերդնոր դաւնայ : Եր թէ
ոք առնու կաղնի փայտի սղոցուք և
քացախով աղէկ մնշէ և ցամաքեցնէ և
զնուուն անդ թաղէ, նա աղէկ պահէ :

ՄԻԹ . — Հաղափս դամնի ոք լաւ պա-
հէ : — Եւ զդամոնն, զոր այլազգիքն
Պարս էրէիտ ասեն, և դիր՝ ի կարաս, և
յիստիած քաղցր գինի լից՝ ի վերայ, և
երբ մնկիս² կեր, անուշ լինի : Եյլկերպ .
քաղէ զաղւոր հասած դամնն ծեռօքդ
որ չհարուի և լից՝ ՚ի նոր կաւէ ամսն
և զերանքն ծեփէ և պահէ, նա շատ
դիմանայ :

ՄԼ . — Ա ասն ամենայն լորային և խէճէ-
պային իրաց պահէլոյ : — Եյլ և Փստու-
խի, ընկուզի և այլ այսպիսեացս, պարտ
է որ՝ ՚ի ծառէն վայր առած ժամանակդ
աղջով լուանաս և ցամաքեցնէս և
ապա պահէս . եթէ վրայի կէճեպն
հանգիստ չելնէ վրայէն, նա ՚ի յերդ
թաղէ՝ ինքն ինքեան ելանէ, և կե-
չեպն հանես յառաջ, ապա թէ աղ-
ջով լուանաս :

ՄԼԳ . — Ա ասն նշէ պահէլոյ : — Երբ
կամենաս զմուստառի բերանքն ծեփէլ
և դու ան զնոր պուտուկ՝ և լից զկանաչ
թուզն, ՚ի ներքս միսէ զպուտուկ՝ ՚ի մուս-
տառն որ պուտկի բերանն և կարսին
հաւասար յիրար գան, և զոյէ զեր-
կուքն և ծեփէ և թող . յորժամուզե-
նաս՝ զթուզն թաժայ դտնուս :

Լրվայեան տր ֆլորիվալ վարժա-
պետ հայերէն լեզուի ՚ի Բարիզ :

Զարւոյս սկիզբները (21 յունուաւ-
րի) մեռաւ Պ. Պօղոս Խմիլ Ըլվայ-
եան տը Ֆլորիվալ, հայագէտն և
դասատու հայերէն լեզուի ՚ի գրատան
Ռարիզու, 62 տարեկան : Վասան տա-
րեկան հասակին մէջ մտած էր դիւա-
նագրութեան վարժարանը, որոյ ըն-
թացքը երեք տարուան մէջ կատարե-
լով, յետոյ արևելեան կենդանի լե-
զուաց ետևէ եղաւ, որով և 1828էն
արքունի գրատան հայերէնի վարժա-
պետ դրուեցաւ : Ռուսը կեանքը հայ-
կական դպրութեան ետևէ եղած է . և
Ա . Պ ազարու հայկական Ճեմարանին
անդամակից գրուած էր : Հրատարա-
կած գրոց մէջ գլխաւորներն են թար-
գմանութիւն Պատմութեան Մոլոխի խո-
րէնացայ, հանդերձ պատմական ծա-
նօթութեամբք . Համառօտութեան պատ-
մութեան Հայոց . Առաջի Ոխիթարայ
Պաօշի : Ոխիթարեան մահանութեան վրայ
տեղեկութիւն մը . Եղծ աղանդոյ Եպօն-
կայ կողբացոյ : Եղնակէս հրատարա-
կած է արևելքի վրայ այլ և այլ տեղե-
կութիւններ աստական օրագրին մէջ :
Կապետական պատիւ ալ ընդունած է
1839էն :

Բարձր ծիսնան մը :

Դերմանիոյ Հակըն քաղաքը գոր-
ծատուն մը կայ . որոյ ծխհանը Դեր-
մանիոյ մէջ գտնուածներէն ամենէն
բարձրն է, և աշխարհքիս մէջի եղած-
ներուն ալ բարձրագոյններուն մէկն,
երկայնութիւնն հարիւր երեսուն մէզը
է : Վանի մը տարի առաջ ծխհա-
նը փոթորկէ մը ծռելով, հմուտ Ճար-
տարապետին մէկը նորէն շոկեց և ու-
զելով այս յաջողութեանս հանդէս մը
ընել՝ անցեալ տարի հոկտեմբերի 29էն
տափարակ մը շինել տուաւ ծխահա-
նին գագաթան վրայ և անոր վրայ

1. Ի մեջի օրէն խլժ շինէ . ըստ օրինակի կթոցի
(սապատի) պատեսցես զնա պրտուով :
2. Միկու . կամենաս :